քաց, որպէս ունիմք ասել 'ի կարգին։

Ի պաշարման քաղաքին Երուսաղէմի գտաւ անդ և մեծ հայրապետն Հայոց Գրիգոր վկայասէր, զի կրկին անգամ եկեալ էր անդ վասն ուխտի. զի թէպէտ և վտանգեցաւ յոյժ, զի այլազգիք 'ի խնդիր էին բերել 'ի ձեռս և սպանանել զնա, այլ խնամօքն Աստուծոյ զերծաւ անտի անվնաս և դարձ արար ուրախութեամբ 'ի տեղի իւր։

ԳԼՈՒԽ ԺԸ.

Մահ Կոնդոպրեայ։ Բալասվին. Ա։ Կրօնամոլութիւն Լատինաց. Մաս. զատիկ։ Աշշաւանք Բալասվինի և մահ նորա։ Բալասվին. Բ. Գայթ և մահ նորին։ Բալասվին. Գ։ Տէր Գրիգոր։

ՅԵՏ տիրելոյ քրիստոնէից քաղաքին սրբոյ՝ զօրաժողով լեալ Խալիֆայն Եգիպտոսի յամենայն ազգաց, դիմեաց սատակութեամբ եւ մեծաւ ցասմամբ 'ի սահմանս Հրէաստանի. եդեալ 'ի մտի թափել վերստին 'ի ձեռաց Լատինաց զերուսաղէմ իւրովք գաւառօք իբրեւ զսեփհական ժառանգութիւն իւր։ Իբրեւ լու եղեւ յականջս Կոնդոպրեայ առաջին թագաւորին Երուսաղէմի արշաւանք Եգիպտացւոց՝ ամասարեալ էլ ընդ առաջ նոցա բազմութեամբ Խաչակիր զօրաց. թէպէտ և զանգիտէր Կոնդոպրէ հայեցեալ 'ի սակաւութիւն զօրաց իւրոց՝ ընդդէմ այնչափ բազմութեան թշնամեացն, այլ 'ի ճակատիլ սոցա յեղբ Միջերկրական ծովուն՝ դիմեցին զայրագին 'ի վերայ այլազգեաց, եւ կոտորեալ զբազումս 'ի նոցանէ արկին տապաստ զդիակունս նոցա, եւ զփախստեայս կորուսին ծովամոյն, և կանգնեալ զմեծ յաղթանակն զայն, ժողովեցին աւար բազում եւ դարձան ուրախութեամբ յԵրուսաղէմ։

Իսկ յամին երկրորդի գնաց Կոնդոպրէ 'ի Կեսարիա Պաղեստինացւոց, եւ այլազգի իշխանք քաղաքին նենգութեամբ ելին ընդ առաջ նորա եւ ընկալան զնա սիրով և խաղաղութեամբ, եւ տարին նմա ընթրիս, որոց խառ-